# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 772-Ա «11» մարտի 2016 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

1. Հաստատել Երևանի.

1) հհ. 1, 2, 4, 5, 7, 8, 10, 13, 14, 19, 20, 23, 24, 26, 33, 39, 40, 41, 53, 55, 61, 67, 71, 80, 81, 157, «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր,

2) հհ. 6, 17, 34, 35, 45, 47, 49, 60, 64, 68, 70, 95, 101, 107, 120, 123, 160, 167, 175, 178, 194,

3) հհ. 44, 48, 59, 84, 85, 87, 104, 117, 124, 125, 136, 147, 171, 177, 180,

4) հհ. 11, 89, 90, 91, 113, 116, 121, 152, 162, 174, 176, 179, 181, 191,

5) հհ. 12, 18, 27, 31, 32, 38, 50, 52, 66, 69, 74, 75, 79, 86, 98, 99, 110, 137, 140, 144, 154, 158, 161, 169, 173,

6) հհ. 21, 36, 37, 51, 56, 63, 76, 77, 78, 82, 128, 129, 130, 132, 145, 151, 172, «Կույրերի երեկոյան միջնակարգ դպրոց»,

7) հհ. 22, 93, 100, 102, 108, 111, 122, 126, 131, 138, 146, 153, 155, 156, 168, 185, 188, 192, 196, 199, 200,

8) հհ. 88, 106, 133, 134, 135, 141, 143, 150, 163, 164, 166, 186, 187, 197 և «Հ.Մաթևոսյանի անվան միջնակարգ դպրոց»,

9) հհ. 2, 6, 8 հատուկ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2016թ. եկամուտների և ծախսերի ու դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներն ու հաստիքացուցակները համաձայն N1, N2 և N3 հավելվածների:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար գնումներն իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N.168-Ն որոշման պահանջներին համապատասխան,

2) դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հիմնական միջոցների (ամրացված գույքի) հիմնական վերանորոգման գծով աշխատանքներն իրականացնել սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում,

3) եկամուտների և ծախսերի ու դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված «Այլ ծառայություններ և ծախսեր», «Պարգևատրում» և «Հիմնական միջոցների (ամրացված գույքի) հիմնական վերանորոգում» հոդվածների գծով գումարները, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես աշխատակազմի ֆինանսական և հանրակրթության վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո,

4) բացառել կազմակերպությունների եկամուտների և ծախսերի ու դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածային գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու հանրակրթության վարչությունների պետերի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Վ.Նիկոյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3
Հաստատված է
Երևանի քաղաքապետի
«11» 03 2016 թ.
N 772-Ա որոշմամբ

# ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱԿ
## Երևանի քաղաքապետարանի «Վազգեն Առաջինի անվան հ. 168 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

| Հ/Հ | Հաստիքների անվանումը | Միավորների քանակը | Մեկ միավորի ամսական աշխատավարձը | Հավելում | Ընդամենը ամսական աշխատավարձը |
|---|---|---|---|---|---|
| | Վարչական անձնակազմ | 5 | | 190000 | 945000 |
| 1 | Տնօրեն | 1 | 155000 | 70000 | 225000 |
| 2 | Տեղակալ ուսումնական աշխ.գծով | 2 | 150000 | 60000 | 360000 |
| 3 | Տեղակալ մասնագիտ.կրթական աջակց.գծով | 1 | 150000 | 30000 | 180000 |
| 4 | Տեղակալ վարչատնտեսական աշխ. գծով | 1 | 150000 | 30000 | 180000 |
| | Մանկավարժական հաստիքային անձնակազմ | 73,2 | | 1395919 | 9169825 |
| 5 | Դաստիարակչական աշխ. կազմակերպիչ | 1 | 105784 | | 105784 |
| 6 | Լոգոպեդ | 2 | 104827 | | 209654 |
| 7 | ՆԶՊ և ԱԿ ուսուցիչ | 1 | 105784 | 7760 | 113544 |
| 8 | Երկարօրյայի դաստիարակ | 1 | 105784 | | 105784 |
| 9 | Հատուկ մանկավարժ | 3 | 105784 | | 317352 |
| 10 | Հոգեբան | 3 | 105784 | | 317352 |
| 11 | Դաստիարակ | 2 | 105784 | | 211568 |
| 12 | Սոց. մանկավարժ | 2 | 105784 | | 211568 |
| 13 | Ուսուցիչներ | 58,2 | 106341 | 1388159 | 7577219 |
| | Սպասարկող անձնակազմ | 28,5 | | 91792 | 2416840 |
| 14 | Գլխավոր հաշվապահ | 1 | 115000 | 60000 | 175000 |
| 15 | Հաշվետար | 0,5 | 77904 | | 38952 |
| 16 | Գրադարանի վարիչ | 1 | 87904 | | 87904 |
| 17 | Գրադարանավար | 1 | 87904 | | 87904 |
| 18 | Լաբորանտ | 2 | 77904 | | 155808 |
| 19 | Օպերատոր-տեխնիկ | 1 | 77904 | | 77904 |
| 20 | Քաղ. պաշտ. շտաբի պետ | 0,5 | 77904 | | 38952 |
| 21 | Գործավար | 1 | 77904 | | 77904 |
| 22 | Ընթացիկ նորոգման բանվոր | 1 | 77904 | | 77904 |
| 23 | Հնոցապան | 1 | 77904 | 15896 | 93800 |
| 24 | Դռնապան | 4 | 77904 | | 311616 |
| 25 | Պահակ | 4 | 77904 | 15896 | 375200 |
| 26 | Հավաքարար | 9 | 77904 | | 701136 |
| 27 | Այգեպան | 1 | 77904 | | 77904 |
| 28 | ԿՄՊԿՌԻ մենքի բաշխ.պատ. | 0,5 | 77904 | | 38952 |
| | Ընդամենը | 106,7 | | 1677711 | 12531665 |

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ — Ս.Ղազարյան
ԿՏ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ — Ս.Գալստյան
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ — Է.Հայրապետյան

**«Երևանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան Հ. 168 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տարֆիկացիոն ցուցակի ամփոփ տվյալներ**

| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՖԻԿԱՑԻՈՆ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՏՎՅԱԼՆԵՐԸ | | | |
|---|---|---|---|
| **Հ/Հ** | **Ցուցանիշներ** | **Չ/միավոր** | **Ընդամենը** |
| 1 | Դասարանների թիվը | դասարան | 41 |
| 2 | Սովորողների թիվը՝ այդ թվում | աշակերտ | 1129 |
| 2.1 | — կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների թիվը | աշակերտ | 74 |
| 3 | Շաբաթական դասաժամերի քանակը՝ այդ թվում | ժամ | 1150 |
| 3.1 | — կիսվող ժամերը | ժամ | 97 |
| 3.1 | — խմբակների ժամերը | ժամ | 33 |
| 4 | Խմբակ(ներ)ի անվանումը | Հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, աշխատանքի ուսուցում, սպորտ, պար, երգչախումբ, շախմատ | |

| **Հ/Հ** | **Հաստիքներ** | **Աշխատողների թիվը** | **Դրույքների** | **Ամսական** | **Այլ** |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարչական աշխատողներ | 5 | 5.0 | 945000 | |
| 2 | Մանկավարժներ (ուսուցիչներ)՝ այդ թվում | 61 | 58.2 | 7577219 | |
| | — մանկավարժների ուսուցչական գործունեության | | 57.0 | 7341026 | |
| | — վարչական անձնակազմի ուսուցչական գործունեության | | 0.9 | 122193 | |
| | — մանկավարժական հաստիքային անձնակազմի ուսուցչական գործունեության | | 0.3 | 114000 | |
| | — գրադարանավարների ու լաբորանտների ուսուցչական գործունեության | | | | |
| 3 | Մանկավարժական հաստիքային անձնակազմ (սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ,ՆԶՊ և ԱԿ ուսուցիչ, հատուկ մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, սոց. մանկավարժ և այլն) | 15 | 15.5 | 1631558 | |
| 4 | Դաստիարակներ | | | | |
| 5 | Հաշվապահ | 1 | 1.0 | 175000 | |
| 6 | Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ | 25 | 27.0 | 2202888 | |
| ... | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 107 | 106.7 | 12531665 | |